

Բ Ա Ն Ա Ս Է Ր

ՀԱՆՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Ը ՏՈՒՐ

1906

Տարեկան 15 ֆր = 6 օր

3 դրամ

ՊՐԱՆ Բ

N° 2

ԱԶԳԻՄԸ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Պ Ա Յ Ա Ն Ե Ր Ն



Ազգի մը պահպանութեան նպատակներն փոքր ինչ կը տարբերին երբ աչք ազգն իր մայրենի հողին վրայ կ'ապրի. եւ կամ անկէ դուրս գազութներ հազմած է տառաջիտարնաց մէջ. Քննեմք ասա նախ՝ իր բնագոտաւ մէջ գտնուող ազգի մը ինքնութեան պահպանման պայմաններն, որք ըստ մեզ հինգ են թուով.

1. Աշխարհագրական նպաստաւոր գիւրք.
2. Պատմութեան գիտակցութիւն.
3. Ուրոյն լեզու եւ գրականութիւն.
4. Ուրոյն կրօն կամ գոնէ յարանուանութիւն եւ ձիաւանդութիւն.
5. Ազգային ինքնայատուկ սովորութիւնք.

Ա. Աշխարհագրական լու. գիւրք մը. բնական սահմաններով չըջապատեալ, յոյժ կը նպաստէ ազգի մը գոյութեան պահպանման. Որինակ՝ Զինաստան որ հիւսիսէն ու հարաւէն լեռանց ամառ չգլխաներ ունի, արեւելքէն Մեծ Ովկիանոսն, իսկ արեւմուտքէն՝ նշտնաւոր պարիսպն որ քնական թունձրի մը չափ զօրաւոր է. եւ անոն աչք սմուր գրեց հեռեւանօք այդչափ երկար պատմական կեանք մը ունեցած է. Եգիպտոսն՝ որոյ բնակչութիւնն Նիկոտի փոխնքն համախմբուած էր՝ զինքն չըջապատող անասաններով պաշտպանուած է, հիւսիսէն ծովով պահպանուած է, եւ միայն արեւելեան հիւսիսէն՝ Արաբիոյ հեռ հաղորդագրութեան

պարանոցն եղած է իր սկար կողմն՝ եւ աստի ենթարկուած է միշտ կարեւոր արշաւանաց Սպանիա, Սինգլիա ու Ֆրանսա իրենց բնակունդից կը պարտին իրենց իբր ինքնուրոյն ազգութեան պաշտպանումն, նոյնն պիտի ըսէի Խաւրիոյ համար, բայց այդ երկրի աշխարհագրական ներքին բնական բաժանումներն զայն շատ մը փոքր իշխանութեանց բաժնելու պատճառ եղած են, ինչպէս գիտէք:

Դժբաղդաբար Հայաստանի գիւրքն շատ սկար է, արդարեւ, դուն ուրեք միայն արեւելքէն մինչ կասպից ծովուն, եւ հիւսիսէն մասամբ կովկասի լեռնաշղթային կոթնած է, հարաւէն կորդուայ լեռներն եւ արեւելքէն Սփրաաի՝ գնացքն շատ սկար սահմաններ են: Եթէ միայն Մեծ Հայքն նկատի առնեմք՝ կասպից ծովու հարսակողմէն Պարսիք, արեւելեան հարաւէն Մարք, հարաւէն Տիգրիսի ու Կփրոսի գնացքն՝ ի վեր Ասորաքարեւացիք ու Հագարացիք, արեւմտեան հարաւէն Հեթաղներն, ու արեւմուտքէն՝ Հոռովմայիցիք եւ Բիւղունգացիք միշտ բաց դուռ մը գտած ին արշաւելու: ի Հայոս Հայաստան մեծ ուղղորէ շրջապատեալ եւ ցիրանցանելի ըլլալուն՝ անցուկարձից ճանապարհ եղած է աշխարհակալաց, եւ իր հոգի բերրութիւնն ու հարստութիւնը նախանձու պատճառ մ'ըբած են զայն մատաւոր ու հետաւոր աշխարհակալաց Միւս կողմանէ իր ներքին լեռներու շարքն, գետերու ընթացքն, եւ մեծ ու փոքր լիճերն բնական քաղաքաբանումներ, նահանգներ յառաջ բերած են, յորմէ հետեւած է նախարարական իշխանութիւններ եւ սահմանական երկրաց մէջ բոնեխութիւններ՝ որք Վաղարշակայ, Արտաշէսի եւ Տիգրանայ նման հզօր արքայից լուծին տակ միայն կա, տարեալ հպատակներ հղան, իսկ թոյլ թագաւորներու օրով՝ գրեթէ ինքնազուլ մնացին:

Աշխարհագրական ներքին պայմանաց հետեւանօք էր հայ նախարարաց տնմխաբանութիւնն եւ սակոյ արքայից հանդէպ անհնազանդութիւնն, եւ կեդրոնական նահանգաց (Արարատ, Վասպուրական, Տուրուքերան, Սիւնիք) տանուտէրերուն արքայական թագի ձգտումն, ինչ որ առաւել կամ նսւազ յաջողութիւն ալ ունեցաւ:

Այս բաժանումներ միայն Արշակունեանց հարստութեան շրջանին յատուկ չ'էին՝ որպէս կարծեն շատերն, ո՛չ, Հայկազեան շրջանին մէջ նոյնն կը ցուցնեն նորաընթերց սեպանեւ արձանագրութիւնդ, եւ միեւնոյն իրաց շարունակութեամբ յետ Արշակունի հարստութեան բարձման՝ աւատական իշխանութիւններ կազմուած աւ շարունակուած են մինչ 19-րդ դարու սկիզբներն ի Մեծ Հայոս, որոց վերջին մնացորդներն կըրնան համարուիլ Դաւիթ Սիւնեցիի իշխանութիւնն եւ Փարսպաղի մեւ լիքութիւններն: Ուստի եւ Հայերու տնմխաբանութեան բուն շարժա-

որքէն իրենց բնագաւառն է, իրենց հայրենի երկրէն առած են Հայք այդ յոռի գանձն:

Բ. Ազգ մը իր նախնեաց պատմութեան գիտակցութեամբ կ'ոգտուր Պատմական ո՛րեւէ գիպաց նկարագրութիւնն՝ յաջողութեանց թէ պարտութեանց՝ հաստատապէս հայրենասիրութիւն կը ներշնչեն: Ազգի մը անհաւաններն իրենց պատմիչներու ազդեցութեան տակ իւրաքու հետ կը կապուին, կը յօդուին եւ մի մարմին կը կազմեն:

Հինաստուրց պատմիչներն քերթ հայրենասիրտներ էին, իրենց ազգի ծնունդն գիցարանութենէն կ'առնէին եւ գիւցազնական վէպերով կը հիւսէին զայն: Նոյնն ըրած է եւ մեր պատմահայրն Ստրեւացիոն Նա ծայրահեղ հայրենասիրութեամբ մեր պատմութեան սկիզբն մինչ Պրիստոսէ 23 դարեր առաջ տարած է Ասորեստանի պատմութեան նման, եւ կրօնամոլութեամբ Սիւհաթ, Արգարներու աթոռն հայկական հարստութիւն կը համարի, ու կ'անտեսէ նոյն ժամանակ երաժիշտ հովիտին հայ իշխաններն ու Տիգրաններն Միհենոյն զլազմամբ՝ մեր Բագրատունիներն կը համարի Դաւիթի ցեղէն յառաջացած, եւ հետեւաբար Օրոտաի ազգակից եւ անոր մօր սերնդէն Այս տեսակ սխալներն իր ժամանակի ըմբոսնումներու համաձայն էին, եւ անխառն են այդ անսակէտով մեր վաստակաւոր պատմահօր գէժ յարուցած խիստ քննադատութիւններն: Արգարեւ մեր պատմութեան մէջ կան շատ մօթ կէտեր, մանաւանդ Հայկազանց անուանեալ շրջանի եւ Արշակունեաց աշխույժ մասանց մէջ, մեր պարսքն է աշխատիլ որ լուսաբանութիւն անոնք, գիտական ուսումնասիրութեանց առարկայ լինին, որպէսզի հայ պատմութիւնն կապուի Տիեզերականին հետ: Առ այս քերթիւ կ'աշխատին այժմ հայ թէ օտարազգի բանասէրներ, ու պատմաբաններ, անոնց աշխատութեանց մղում մը տալու համար պարտ է մեր հարուստներուն մրցանակներ, ու նուէրներ հաստատեն պատմական այսինչ կամ այնինչ գէղքն լուսաբանելու: Կամ ժամանակամիջոցն ուսումնասիրելու համար՝ հետեւելով քարեյիշատակ Իգմիրեանցի օրինակին:

Մեր պատմութիւնն որ մինչեւ այս վերջին ժամանակներն Տիեզերական պատմութենէն անջատ էր եւ օտարաց համար անծոռնթ, շնորհիւ նորանոր ուսումնասիրութեանց, սկսած է կապուիլ ընդհանուր պատմութեան հետ, սակայն զիստ շատ ու շատ անգիւրդական կարեւորութիւն ունեցող գէղքեր ու անցքեր անծանօթ կը մնան, այդ կարգէն է այսօր ան Վարդանանց տօնն, զոր պատշաճ կը համարիմ ՚ի վեր հանել եւ պորզել պարագայիւք:

Կաթողիկոսութիւնն Լուսաւորչէն սկսելով կարեւորութիւն ունէր ՚ի Հայս, նա ժողովրդեան ներկայացուցիչն էր ու խորհրդականն:

արքային՝ որ ազնուականութիւնն կը ներկայացնէր՝ կաթողիկոսի ձայնը մեծ կշիռ ունէր եւ արքա քառանց անոր հաւանութեան բան մը չէին կարող բնել։ Կաթողիկոսութիւնն ունէլ իր ընդարձակ հողերն ու գիւղերն, Տարօնն իր սեփականութիւնն՝ էր կաթողիկոսական իշխանութիւնն յորդեց յորդիւ կը շարունակուէր. այսպէս հասաւ մինչ Մեծն Սահակ Պարթեւ, որ արուդսակ շունհայտուն իր անդիկն հարսնութեան առաւ Տարօնցի Մամիկոնեան ազնուական ցեղէն Համայտուորն, եւ հետեւարար Մամիկոնեանց անցանք ըստք կաթողիկոսական ստացումածքն, ու սոքա բնականէն պատշաճ եղան կաթողիկոսական աթոռի՝ եւ ներկայացուցիչ՝ ժողովրդական ձայնին եւ ահա երբ ՚ի մէջ կոյս եւ դարուն Արեւելքի Զրադաշտականութիւնն կը սպառնար առաւել ՚ի Հայս, բնաջինջ բնիւթ քրիստոնէութիւնն, ժամանակի կաթողիկոսն Յովսէփ Պաղնատցին՝ որ քաղաքագէտ ոք էր՝ չ'ուզեց պաշտօնադէս ընդդիմութեան գլուխ կանգնել եւ կամեցաւ այնպէս մը ցոյց տալ թէ ժողովուրդն կը դիմադրէ նոր կրօնին Մամիկոնեանք պարտաւոր էին գլուխ կանգնել ժողովրդեան՝ որ արքայական աթոռն ու թագն կրօնացուցած էր՝ ու դիմադրել Յաղկերս Բախ սահմանից, եւ դոցա բնական առաջնորդ պարտ էր բլլալ Վարդան Մեծն Սահակայ թոռն, որոյ աջակցեցան Ղեւոնդեան քահանայք իբր կրօնի ներկայացուցիչք։

Վարդանանք եւ Ղեւոնդեանք հայ կրօնի եւ ժողովրդեան պաշտպանն ու ներկայացուցիչ էին, սակայն իրենց կատարած դերն մեծ եւ խիւսիւղերական նշանակութիւն առաւ արդարեւ, այս պատերազմով նոքա կատեցողին Արեւելքէն Արեւմուտք ընթացող Զրադաշտական հոսանքն, արդիւնցին ընդհանուր քրիստոնէութեան սպառնացող վտանգն։ Օտարներ իսկ այսօր կը խոստովանին թէ առանց Հայոց այս ուժեղ ընդդիմութեան Զրադաշտի կրօնին պաշտամունքն գուցէ տարածուէր համայն եւրոպայ Աւասիկ Սզգ. պատմութեան դէպք մը։ Ղոր կ'արժէ Տիեզերական պատմութեան մէջ մուծանել տալ։

Աւարայրի ճակատամարտէն երկու դար վերջ՝ Տարօնի Մամիկոնեանք քաջին Տիրատոյ առաջնորդութեամբ թուր մը կազմեցին իսլամական բանակին ու կրօնին դէմ, որ հարաւն դէպի հիւսիս կը տարածուէր Այն ատեն գրեթէ բնաջինջ եղան Մամիկոնեանք, սակայն իսլամութիւնն չ'կրցաւ յառաջանալ դէպի հիւսիս Արեւելքի կողմը այդպիսի պատուար մը չ'բարձրացաւ իսլամներու դէմ, ուստի անոնք անգամ զանազան Պարսկաստան եւ անտի Հնդկաստան, մտան Զինու խորերն, Մալաքքայէն անցնելով դնացին Ուկրաինա կղզիներն, Հարաւն՝ Ափրիկէի եզրերն ու խորն տարածեցին իրենց կրօնն, եւ Արեւմուտքէն ողջոյն Պէրպէրստանի տիրապետեցին ու հասնելով մինչ այժմու Մա.

բօքն՝ ճիւղաւթաբն անցնելով՝ Աղանիա հաստատուեցան ու նոյն իսկ յայնկոյս Պիւրենեան լեռանց քարոյնցին իրենց կրօնն, եւ՝ անշուշտ առանց Հայոց ու ժեղ գիւմարութեան՝ Բիւղոնդիոնն ու Արեւելեան Եւրոպան պիտի աչակերտէին Մուհամմէտի վարդապետութեան, կը տեսնէր թէ Հայք ի՞նչ մեծ ու կարեւոր դեր կատարած են Ռատի եւ այս դէպքն եւս քրիստոնէոյ ազգերու համար պէտք է նկատուէր իրրեւ ախեզերական եւ ոչ լոկ հայկական, եւ ինդհանուր պատմութեան մէջ մանկու Վիսպիսի դէպքերը շատ են մեր պատմութեան մէջ զորս ուսումնասիրութիւնը երեւան պիտի հանեն:

Պատմութիւնն ամենէ կարեւոր դասն ըլլալու է մեր վարժարանաց, Ընտելարաններու մէջ հարկ է ուսուցանել մեծ դէպքերն ու դէմքերն միայն իբր վէպ, նախակրթարաններու մէջ աւանդել Ազգ. պատմութիւնն, ծանրանալով նախանաւանդ տնոր զանազան շրջաններու յատկութեանց վրայ, Ուսումնարանաց մէջ զայն տառնել Ճիւղերական պատմութեան հետ միացած, իսկ չափահասներուն ծանօթացնել մեր նախնարց պատմութիւնն ահիոյի եւ պարզ յոգսածներով:

Դ Իտանէն լեզու. եւ դրականութիւն ունենայն ազգի մը պատկանութեան կարեւորագոյն պայմաններէն է լեզուն ազգային զօրանք կուգ մէ. զոր առանց աղաւաղման պահպանել եւ յաջորդ օրերուն իրեն աւանդելն դրականութեան պաշտօնն է Բարոնիացոց եւ Հուհ. Գարապետ իրենց ազգային լեզուի պահպանման մասին կոտորած մեծամեծ ճիւղերուն հանդիսատես եմք ամենքս Պիլճիան շնորհիւ մեծամեծ զոհողութեանց յաջողած է աւանդել ուրոյն կոտորածութեան մը որ շատ փայլուն վիճակ մ'ալ ունի շնորհիւ իր երկրի բերրութեան, սակայն հաւանականաբար իր ազգ լոյսը ճիւղեր չ'պիտի գօրնն պահպանել իր գոյութիւնն, եւ ուշ թէ կանոնա նա պիտի մտաւոր իր դրացոյն Թրանսայի հետ՝ որոյ լեզուն կը խօսի, եւ յորմէ արհեստական տանամուղ մը անջատուած է միայն Սաբրոյ եւ Եգիպտոսի ժողովուրդք կ'օրնացուցած ըլլալով իրենց յատուկ լեզուներն, եւ արար բարբառն ու գրականութիւնն որովհերելով՝ Գորանցոցած են իրենց ազգայնութեան առանձնայատուկ նկարագրներն ու միայն Իրենց Կրօնական տարբերութեամբ կը զանազանին իրարմէ: Սուրբապիս Բիւղոնդիոյ իսլամն Արաբացի իսլամն գրեթէ օրիս է տարբերութիւն չ'աւելայլեւ իսկ այդ երկրաց քրիստոնէականներն իրենց պատկանած յարանոսանութեանց շնորհիւ կը զանազանին միայն:

Գաւառաբարաւներու ծնունդն հասեալնք է երկրի մը ներքին բնական քաժանմանց, լինչպէս եղած է Խալիլոյ եւ Հայաստանի համար Դրականութիւնն լեզուի պահպանելն է ինչպէս քսիւնք, պէտք է նա

ծաղկի որդէսզի լեզուն զերծ մնայ աղաւաղիչ ազդեցութիւններէ:

Ախալ մ'է կարծել թէ Հայն Ն. դարուն միայն ունեցաւ գրական նութիւն. ո՛չ, նաւր չէ գրականութիւն չ'ունեցող ազգի մը համար տաւեր ունենալուն պէս գրել ն. դարու ոսկեղենիկ լեզուքը, եւ այստա-
ղիւի հայ Աստուածաշունչի պէս դրախտ հրաշքերս մը. հրաշխք իսկ չ'կրնար բացատրուի. սա Հայք նախ քան Մեսրոպեան գրերու գործածութիւնն ունեցան գրական շրջաններ, նախ սեպածեւ նշանագրօք եւ ազգային բարբառաւ. (9-րդէն 7-րդ դարն. Ք.) որոց հետքերն կը գտնուին ցարդ 'ի Հայո. ապա մի քանի ցարերու խառնաշփոթութեանց հետեւանօք՝ ուրոյն գրականութիւնն զապար կը գտնայ, մինչ փիւնիկատառ գրականութեան երեւումն. սա զգրադգաբար շատ քիչ հեռք թողուցած է, եւ որոյ յաջորդած են՝ շնորհիւ Կիրստոնէութեան՝ յունական եւ ասորական տասերով գրականութիւնն. Անտոնյան յետոյ Սահակայ, Մեսրոպայ եւ Վոսմապետայ միացեալ ջանքերով առանձին այբուբենով մը օգտուեցանք, որ հաւանականաբար ոչ այլ ինչ է քայքայ եթէ մեր վաղեմի փիւնիկ այբուբենն. քոքր ինչ ձեւափոխեալ, եւ այլ դրացի ազգաց տառերով՝ ըստ նորագոյն պահանջից՝ ճոխացեալ. Այս Մեսրոպեան անուանեալ տառերով հայ գրականութիւնն ծաղկեցաւ յոյժ փայլուն կերպով. յառաջ եկաւ իսկոյն մեր գրական Ոսկեդարն. կազմուեցան թարգմանչական խումբեր ու մարմիններ. որք արտա-
դրեցին թարգմանչական գործեր, որոց գլուխն է Աստուածաշունչն. զոնար հայ գրականութեան Ստար մ'ըսած է, «Եթէ հայ ազգն զնջուի ու միայն իր Աստուածաշունչն մնայ՝ ապագայ գիտուններ ու գրագետ, ներ պիտի վկայեն թէ Հայք մեծ ազգ մ'եղած են»:

Մեր գրական լեզուն անկումներ ունեցաւ եւ ազդեցութիւններ (Յոյն, Արաբ) կրեց, ժի. դարուն, շնորհիւ Կիլիկեան իշխանաց Արեւմտեան հայոց տուած զօրաւոր պաշտպանութեան ու անդորրու-
թեան՝ լեզուն գրական զարկ մ'ունեցաւ ու յառաջ եկաւ գրական Առօրինի դարն, որ զգրադգաբար կարճ կեանք մ'ունեցաւ. արտաքին ազդեցութիւնք (Հասիւն, Արաբ, Թաթար եւն.) եւ երկրի յուզմանց հետեւանօք գրականութեան լքումն՝ աղաւաղեցին զայն ու ժի. դարուն Մխիթարեանք ջանացին վերականգնել գրաբարն արհեստական միջոցներ գործածելով առ այդ, եւ զայն ծաղկեցուցին ժի. դարուն մէջ իսկ Կ. Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ ժի. դարու երկրորդ կեսէն սկսելով մշակեցին աշխարհիկ լեզուն ու գրականութիւնն:

Այժմ աշխարհաբարն կը տիրէ ամենուրեք, գրաբար լեզուք ար-
տադրութիւնք վերջ գտած են. Աշխարհաբարն շատ տկար եւ մանուկ է տակայն, դեռ չ'է զօրացած ըստ բառականին. նա անելու համար պէտք

ունի անունը ասնել գրաբարէն, ինչպէս զեռաւոր մանուկն պէտք ունի իր մօր ստեանց ու կաթինի. պէտք չ'է վաղիւ կաթնահատել զայն որպէս ոմանք առաջարկեն, զեռ աշխարհաբարն շատ ու շատ հետի է ունենայէ գրաբարի ճկունութիւնն, յատկութիւնն ու օճերու ճոխութիւնն. եւ առ այդ մեր այժմու քաջ գրիչներն իսկ ստէյ պէտք կը զգան գրաբարէն ընելու փոխառութիւններ օճերու, ձեւերու, տոութեանց, ու մերթ իսկ նախադասութեանց: Մեր վարժարանաց մէջ պէտք է գրաբարն ուսուցանել աշխարհաբարէն տնքածան, նախակրթարանէն իսկ սկսելով: Սխալ մ'է գրաբարն թողուլ միայն ուսումնարանաց բաժին. ո՛չ, զի այդ եղանակաւ պատանեաց օ՛ր ինչ հազիւ 5 ն ուսումնարաններն երաթալով՝ մնացեալ 95 ն չ'պիտի հասկնան մեր ազգային բուն բարբառն, մեր եկեղեցեաց երգեցողութիւնքն, չ'պիտի հասկնան Աւետարանն, եւ վերջապէս չ'պիտի կրնան կարգաւ մեր ազգային մատենադրերն. ո՛չ, դա մեծ սխալ մ'է. եւ գիտեմք թէ՛ մեր գրեթէ բոլոր մատենագրութիւնն գրաբար լեզուօք է, հազիւ քանի մը կատր նոր զործեր կան աշխարհիկ բարբառով եւ որք աննշան, եւ աննկատելի են դրաբար լեզուօք մեր ունեցած գրական խանդավառ գոհարներու հաւաքածոն տա՛հաւ օ՛ր 5 բոլ իբր թիւ ուսումնարան գնացող աշակերտաց, այդ թիւն ճիշտ կրնանայ համարուիլ 4. Պոլսոյ եւ Ժփղիսի նման մեծ կենդրոններու համար, բայց դա իսկ շարժապահ է այլ շատ մը երկրաց համար, եւ սր զէրոյի կ'ըջնայ Եգիպտոսի համար՝ ուր ուսումնարան չ'կայ. ուսաթի եւ Եգիպտոսահայն միայն աշխարհիկ լեզու սովորելով տանալնիւ ազէս պիտի մնայ մեր եկեղեցւոյ, մասնադրերու եւ՝ ազգային պատմիչներու լեզուին. դա ներքի չէ՛ Այժմ եւրոպական տասը կիցրոններու մէջ օտարներու ձեռք կ'ուսումնասիրուի հայ լեզուն՝ իր լեզուաբանական, կրօնական եւ պատմական կարեւորութեանց համար: Անով կը լուսաբանուին լեզուաբանական շատ մը հարցեր. Եւրոպացի Աստուածաբաններ, հարկ տեսած են զմեզու հայերէն Աստուածաշուշին՝ որպէս զի կարողանան պարզել սուրբ գրոց մոթ կէտերն: Պատմիչք կը զմեն հայերէնին, որպէսզի լուսաբանուին միջին դարու Ասիոյ պատմութիւնն եւ Ասիայէն Արեւմուտք յառաջացող Մոսկով, Թաթար, Սեմաւաք եւ Թուրք արշաւախոս մերսու մասին ժամանակակից հայ պատմիչներու տուած տեղեկութիւններով:

Դ. Ուրոյն կրօն մ'ունենալն նոյնպէս պայման է ազգի մը գոյութեան պահպանման: Երկու դրացի ճեղակից ազգեր՝ ունենալով միեւնոյն լեզուն իսկ՝ կրօնական դանազանութեան շնորհիւ կրնան պարբերով անխառն մնալ ու պահել իրենց առանձնայատուկ ազգութիւնն: Նոյն եւ կարելի է ըսել միեւնոյն երկրի մէջ տարող կրօնական տարբեր

դաւանում ունեցող երկու տարերց համար ևն այս՝ խտրականութիւնն ալ կրնայ իր դերն ունենալ Հայերն կրօնական ազատութեան պաշտպան էին իրենց կոապաշտական շրջանին, զի այն տակն զօրաւոր էին քաղաքականապէս, եւ յորժամ Հրէայ եւ նոյն իսկ Զինացի դադրականք եկան ապաստանելու Հայաստան, աղատօրէն պաշտեցին իրենց Նշովան աւ կոռքերն, բայց երբ Գրիստոնէութեան տակն Հայք ալարայան՝ սկսան խտրական եւ աններող ոյր մշտել, հալածեցին իրենց ծոցին մէջ ծնունդ առնող աղանչներն, զոր օրինակ Պաղիկեաններուն դէմ բողոքող հալածանք հանեցին, եւ նոյնիսկ ապա երկրցս եկեղեցաւ կան համապատար յողով գումարեցին ՚ի Հարք դաւառի (1052—54) եւ վերջապէս Գրիգոր Մազխատորս առ ինչ զանպական դահն միջնորդութեամբ ինչպէս աւելի առաջ ալ և. եւ Բ. հայազգի վասիլնեբու հրաւանով՝ աքսորել տուին զոնոնք, նախ ՚ի Կ. Պոլիս եւ ապա ՚ի Յիւլիպէ, ուսկից իրենց վարդապետութիւնն տարածուեցաւ մինչեւ Եւրոպոյ կեդրոնն, ուր վերջապէս ծնունդ տուաւ այժմոս բողոքականութեան Ատոնց միացորդներն մինչեւ հիմա կան Յիւլիպէի բոլորաբն, Բալխիքեան անուամբ ծանոթ, որք կաթողիկոսութիւն ընդունած ու իրենց ծնունդին անգէտ են եւ կը պահեն զեւ իրենց հայկական սիրտն, Հայոցս յատուկ ստեղծագործութիւններ եւ ընտանեկան սովորոյթներ

Մեր նախնիք Հայ եկեղեցւոյ անկախութիւնը պաշտպանելու համար միշտ մաքսառած են Օրթոտոքսութեան դէմ, եւ մերժած՝ Օոյն եկեղեցւոյ հետ միանալու ամեն առաջարկ, Անյոտաճութեան տարակայ եղած են ամեն անոնք որք՝ քիչ կամ շատ նպատակոր կը խուսին միաբանութեան, ինչպէս էր Նզր կաթողիկոսն, որոյ անուան սկզբնաւ տառն՝ գլխավայր գրիկ սովորական եղած է ժամանակի պատմիչներէն Նշանաւոր է այս խնդրոյ մասին Ներսէս Շնորհաւելոյ պատասխանադրին Յունաց Մանուէլ կայսեր սղղեալ, որով ճարտարօրէն կը մերժուի եկեղեցւոյ միութեան առաջարկն Նշանաւոր են նաեւ Միւնեաց վարդապետանոցին մաքառումներն ընդդէմ կաթողիկ «Միաբաններուն» (Ունիթթոսաց) որք զորով ու բանիւ ջախջախեցին զանոնք, Կիլիկոյ Ռուբինեան հարստութեան ցեղէն 1222-ին արու յաջորդ չ'գտնելուն՝ Լեւոն Մեծի դուստրը զՋապէլ Անտիոքի Պիմունդ ֆրանգ իշխանի որդոյն Փիլիպպոսի տուին, եւ անոր յանձնեցին հայկական թթուն՝ պայմանաւոր հայադաւանութիւնն ընդունի, սակայն սա հակառակ իր խոստման ու ուխտին՝ Լատին կրօնաւորաց զրդմամբ կաթողիկոսութիւնն քաջալերելուն համար՝ Հայք բանտարկեցին ու ապա թունաւորեցին զայն եւ Ջապէլն Լամբրոնի Հեթում իշխանին տուին Ապա եւ Հեթումեան ցեղին սպառման հետեւանօք երբ արքայական թագն արուեցաւ Կիլիկոսի

Յրանսացի Լուսինեան թագաւորին հայամայր եղբօր՝ Գուխոռնին, որ կաթողիկոսութիւնն պաշտպանելուն եւ 'ի Հայս մօցնել փորձելուն համար՝ խեղդամահ եղաւ իր պալատին մէջ իր եղբօր Պեմուշդին հետ։ Անկէ յետոյ Լուսինեանք չ'փորձեցին կաթողիկոսութիւնն ընդունել տալ Հայոց։

Հայ եկեղեցւոյ անկախութիւնն նախանձաւի եղած է ռաւարաց աշփինս կը յիշեմ գիտուն Յոյն մը որ երջանիկ կը համարէր Հայերն այդ մասին եւ կը պնդէր որ իրենք՝ Ռուսաց հետ համակրօն չ'ենելով՝ անոնց հետ ձուլուելու վտանգին ետեակայ են։ Պուլկարներն ուրոյն եկեղեցի ունենալու եւ Յունաց հետ ձուլուելու վտանգէն զերծ մնալու, համար՝ դիտմամբ այնպիսի միջոցներու դիմեցին՝ որ Կ. Պոլսոյ Յոյն պատրիարքն հարկադրուեցաւ զիբնեք բանադրելու իբր հերձուածող, եւ սովաւ հասան իրենց նպատակին։

Պատմութիւնն մեզ կը ցուցնէ թէ՛ ամեն անգամ որ Հայք՝ նոյն իսկ իրենց հայրենի երկրին մէջ հեռացած են իրենց Ազգային Եկեղեցիէն՝ ու ի՞նչ կանուխ օտարացած ու այլոց հետ խառնուելով կոյսուած են Հայութեան համար։ առ այս օրինակներ են Օրթոտքս Հայերն կամ Հայ-Հոռոմներն որք գրեթէ բոլորովին անհետացած են, եւ ձուլուած օրթոսոքս Յոյներու հետ։ Սուրբոյ եւ Գաղատիոյ Հայ կաթողիկոսներն, որք կորսնցուցած են իրենց մայրենի լեզուն, աւելի հետի կը զդան ինքզինքնին Հայերէ քան այլ ազգերէ։ Եւ նոյն կրնամք ըսել եւ Հայ Բողոքականաց համար՝ որք ինքզինքնին աւելի Սմերկացւոց ու Անդղիայոց ոց մերձ կը զգան քան Հայոցս. այս վերջին տարիներու դժբաղդութիւններն քաւրեքաղղաբար սթափեցուցին զսնոնք ու հակառակ հոսանք մը յատուց բերին։ Վերջացնելու համար յիշատակեմք Համլէնի, Եփրատացւոց եւ այլ Հայ Իսլամներն կամ Կէսկէսներն՝ որք ըսորովին թրքացած են կամ թրքաճաշու վրայ։

Կրօնի մասին կրնամք խորհիլ ազատօրէն որչափ կամիմք՝ երբէք դա պատճառ մ'ըլլալու չէ՛ պաշտօնապէս ազգային եկեղեցիէն բաժանման, զի այդ բաժանում ազգութենէ բաժանում կը նշանակէ, եւ իմ մասիս աւելի առաջ կ'երթամ, ու ազգութեան գաղափարն այնչափ սուրբ ու նուիրական կը համարիմ որ անկէ չ'բաժանուելու համար՝ ինձ համար նուիրական պիտի համարուի Հայոց կողմանէ ընդունուած ամեն փարգի կրօն ու պաշտամունք առանց պաշտօնական քննադատութեան։ Այո՛, եթէ նոյն իսկ Հայերն կով մը պաշտէին՝ սիրով պիտի երկրպագէին անոր առջեւ, զի դա ազգային է, հայկական է, ուստի եւ սուրբ է։

Արդ՝ լաւ ուսանիւք մեր կրօնն, նախանձախնդիր ըլլամք անոր անկախութեան, ճանաչեմք մեր եկեղեցւոյ այլ յարանուանութիւններէ

նւնեցած տարբերութիւններն, պահմք զանոնք, դուրդուրածք մեր
Ազգային Եկեղեցւոյ վրայ, նա պահած է զմեզ ցարդ եւ նա պիտի
նպաստէ մեր պահպանման:

Ե. Ազգի մը ինքնայատուկ տարազը, սովորոյթք ու ասոք կ'աղդեն
եւ այդ ազգութեան պահպանման, զի դժբա միևնոյն տոմի զաւակներն
իրարու կը կսպեն եւ յայլոց կը զանազանեն:

Ազգային տարազ մը զայն կրող տոմի մը զաւակաց համար նուր-
բական է. միեւնոյն տարազն կրողներ իրարու մէջ հզրայրութիւն մը
կը զգան Մեր գրացիներէն Այլ առային, Սեւ լեռնցիներ, Պուլկարն,
Գըղըլզաշն, Քուրդն, Զէյյակն ու Պարսիկն, որք պահած են իրենց
ազգային տարազն. նոյնատարազ անձանքի մ'իսկ տեսնելուն՝ անոնց
հանդէպ ձգուած մը կը զգան, եւ պատրաստ են զայն պաշտպանելու:
Մենք Հայերս դժբաղդաբաժնի վաղուց կորսնցուցած եմք մեր ազգային
ինքնայատուկ տարազն եւ միայն քանի մը պատուազ մէջ մասնաւոր
հանդերձներ կը կրեն Հայք, որպէս Մշեցիք, Վոլիկներն եւ Կարնեցիք
եւ սա աւելի կանանց մէջ, Թրքահայք շուրջ 25 տարի առաջ վարձեցին
Մշեցւոց արմախնէն ընդհանրացնել Հայոցս մէջ. Կ. Պոլսոյ Հայ երիտա-
սարգք ասաջին օրինակն տուին, սակայն Օսմ. կառավարութիւնն
զգաց դժուար կարեւորութիւնն եւ արգիւեց:

Մեր ազգային հինուոց տօներն քրիստոնէական տօներու ձեռն
առած են. եւ միայն Վարդանանց, Սահակ-Մկրտիկ տօներն իբրեւ ազ-
գային տօն ճանչցուած են, որոց վրայ աւելցած է Վերջին ժամանակաց
ծնունդ Սահմանադրութեան տարեդարձի հանդիսներն, Կ'արժէր որ
ասոնց թիւն պատմական քննութեամբ աւելցուէր, զոր օրինակ քաջին
Տիրանայ բանակինն, որոյ գործքն առիթ ունեցանք յիշատակելու:

Մեր հինուոց ազգային տօներն ըսինք քրիստոնէական տարազ
զգեցած են. արդարեւ՝ Կաղանդոս որ թեպէտ յաւնա-յրիստոնէական է,
սակայն կը ներկայացնէ մեր Հայոցս նաւասարդի կամ Աւանդոյի իրաւա-
ճանութիւններն, երկրի բերքերով եւ պտուղներով սեղան զարդարելն,
ու անոնց հանդիսական ճաշակմամբ, եւ հաւանաբար այդ սեղանից
լուսավառումն, անու շապուրի պատրաստութիւնն, տղաքներն պտուղ-
ներով իսկ կենդանիներն մասնաւոր կերերով կաղանդելն, այդ գիշեր-
ուան երազներու տրուած միծ կարեւորութիւնն, եւն. այդ հինուոց
ժամանակներէ կուգան մեզ:

Մեղեդին հեթանոսական ձմեռնատօնն կը ներկայացնէ Տեառնըդ-
առաջի հրավառութիւնն՝ կրակի պաշտաման մի հետքն կը ներկայացնէ,
այդ առթիւ հուրի շուրջ բոլորն պարեր տարեկն՝ որպէս կ'ընեն այժմ
մերազնեայք՝ Հայաստանի մէջ Միւրի տօնին իրաւաճանութիւններէն

մնացած է: Զնային հեթանոսութեան գարնանա:ուտի տօնն կը ներկայացնէ, գուցէ եւ Զնայի բառն մեր հեթանոս նախնիքներէ կուգայ, զի իբր քրիստոնէական ծագում անոր մասին տրուած բացատրութիւնք գոհացուցիչ չ'են: Այդ տօնն նաւապատիքով սկսելն, այդ առթիւ կարմիր ձու ուտելն ու ծեղկու ցնելն՝ իրենց մէջ ունենալու են հեթանոսական սովորութեանց մնացորդներ: Համբարձման տօնն որ 'ի մեզ մտղորդական բարբառով Վիմալ կ'անուանի, հաւանաբար Տիտ իմաստուատութեան եւ բաղդի Աստուծոյն տօնն կը ներկայացնէ, այդ տօնին առթիւ ցարդ Հայք վիճակ կը ձգեն Վարդափառն Անահտայ Հայոց պաշտպան, զգաստութեան եւ Գուրց Աստուածուհւոյն տօնն է, յորում Հայք վարդ կը սփռեն՝ որպէս կ'ընէին Անահտայ արծանին շուրջ, Զուր կը սրսկէին ու կ'ընեն 'ի նշան Զրհեղեղի եւ այդ Աստուածուհւոյն Զուրց պաշտպան յատկութեան, եւ աղանի կը թոցնեն 'ի նշան Նոյի արծակած աղանւոյն: Մշոյ վանքն երբեմն Անահտայ պաշտաման գլխաւոր կեդրոն էր եւ ապա ինչպէս Ս. Կարապետի անուան նուիրուեցաւ, ժալայն տեղական Հայր Վարդափառին կը շարունակեն տօնել զայն: Ըստ վաղեմի սովորութեան, եւ նոյն իսկ Կ. Պոլսոյ Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին՝ որ Մշոյ գաղթականութեան մը կողմանէ հաստատուած է՝ վարձավաւին Տարօնոյ զաւակներն ըստ իրենց հայրենեաց կը տօնեն զայն:

Աստուածածնայ եւ Քաջի տօներն՝ որք վերջին դարերուն միայն գրուած են քրիստոնէական եկեղեցւոյ կողմանէ՝ չ'ուներ իրենց մէջ մեր նախնեաց տօներու նշանակութիւնն, գուցէ թակայն խաղողն առանց օրհնելու չ'ուտելն ազգային սովորութիւն մը մնացած է: Մեռելոցի տօներն, հոգեհացն, մատապն աւելի ազգային հինաւուրց սովորութիւններ են քան թէ քրիստոնէական, որպէս պատմութիւնն մեզ կը ցուցնէ: Ուստի յարգելու ու պահպանելու եմք մեր այս տոնմային բուրբ տօներն ու անոնց առթիւ 'ի գործ գրուած ձեւականութիւններն ու սովորոյթներն, առանց օտարաց առջեւ զայնս գոլծադրելէ քաշուելու: մեր տօնական տոհմիկ սովորոյթք՝ երբեք նախացուցիչ չ'են մեզ համար եւ կը նպաստեն մեր ազգայնութեան պաշտպանման:

• •

Գումք այժմ այն պայմանաց որք կարեւոր են գաղութներու, այսինքն, Մայր Հայրենիքէն հեռի գտնուողաց պահպանութեան համար:

Կարեւոր է աստ թուել նախ մեր գաղութներն, քննել անոնց ունեցած վիճակներն, անոնց ուղղութիւնն եւ եզրակացնել թէ՛ ի՞նչ ուղղութեամբ ու սկզբունքով կարելի եղած է այդ գաղութներու աւելի երկար ասին տակալ ու պահել իրենց ազգութիւնն՝ ասոնց խառնուելու օտարաց հետ:

Հայաստանն է. դարձն սկսեալ չարահասկ գաղթականութիւններ հաս-
նած է իր ծոցէն. զի այս խուականներէն յետոյ զրեթէ միշտ պատե-
րազմաց եւ խոսովութեանց դաշտ եղած է նաւ Արդարեւ է. եւ Զ. դա-
րերուն կը սեռնամք Հայերն գաղթել 'ի Հոռով եւ 'ի Պարսկաստան,
յաջորդ երեք դարերուն 'ի Միջագետս, 'ի Սուրիա, 'ի Բելզանդիսն.
Ժ. եւ ԺԱ. դարերուն 'ի Բիւզանդիոն. Նգիպոսոս, Կիլիկիա, ԺԲ. ԺԳ.
ԺԴ. դարերուն 'ի Քրիմ, Մոլտավիա, Վալաքիա, Թրանսիլվանիա,
Լեհաստան, ԺԵ. եւ ԺԶ. դարերուն Իտալիա (Վենետիկ, Ճենովա, Լիւ-
վուռնիա եւ այլ ծովեզերեայ քաղաքներ), 'ի Սպանիա, ԺԷ. դարուն
սկիզբն բռնի 'ի Պարսկաստան եւ անտի Հնդկաստան, Պիքմանիա, Ճա-
վա. ԺԸ. դարուն Հոլանտա, Իտալիա, Ռուսիա, ԺԹ. դարուն Ամե-
րիկա, Պուրկարիա, Նգիպոսոս, Ֆրանսա, Անգղիա եւ այժմ 'ի սփրոս
աշխարհի:

Հայ գաղթականներն ամեն տեղ քաղաքակրթիչ տարրեր եղած են
իրենց նոր միջավայրերուն մէջ, եւ նոյն իսկ առ այդ բունի (Պարսկաս-
տան) կամ հրաւիրանօք (Ռուսիա, Կ. Պոլիս) տարուած են Այդ ամեն
աշխարհներու մէջ Հայք փայլած են միշտ, մանաւանդ եղած են նշա-
նաւոր վաճառականներ ինչպէս 'ի Վենետիկ, Ճենովա, Սոլտավիա,
Պուզովիս, Լեհաստան, Հունգարիա, Հնդկաստան, Ճավա, Հոլանտա եւ
Ռուսիա, եւ արժանապատիւ են գրուածքից հրովարտականութեւ եւ մեծաշնորհ-
ներու. Արդարեւ Վենետիկի ծերակոյտն զՀայս Սիւրըսզոյն եւ քաղմե-
րախտ անդ կ'անուանէ իւր 1640-ին 1710-ին եւ 1764-ի հրովարտական
մէջ, եւ մասնաւոր մենաշնորհներ կ'ընէ, որպէս ազնիւ քարեր ու մե-
սաքս վաճառելու, եւ քաղաքին առաջին հրապարակին (Ս. Մարկոսի)
վրայ խանութ ունենալու առանձնաշնորհութիւնն Նմանօրինակ մենա-
շնորհներ կուտայ եւ Ճենովայի ծերակոյտն Հայոցս (Մեծն Պետրոս
1720-ին մասնաւոր հրովարտակաւ զայնս իւր Կրկիրն հրաւիրեց, եւ
անոնց սուաւ մատաքսի վաճառականութեան մեծաշնորհն Նմանօրինակ
հրաւէրներ եղած են Հայոցս Լեհաց եւ Հայդարապոց կողմանէ:

Հայք իբրեւ վարպետ արհեստաւորներ հրաւիրուած են Պարսկաստան,
Կ. Պոլիս, Ռուսիա, Նգիպոսոս եւ այլուր. փայլած են մանաւանդ իբր
ռակերիչ, երկաթագործ, ճարտարագէտ Կ. Պոլիսն պէնող հրաչափող
պալատներն ու մզկիթներն հայ ճարտարապետաց ու արհեստաւորաց
ձեռակերտներն են. Հայ ճարտարապետութիւնն Հայք տարած են իրենց
հետ, Իտալիոյ եւ Ռուսմանիոյ մէջ հայ ժողով շէնքեր կը տեսնամք
Արճէշի (Ռուսմանիա) եկեղեցին՝ Արճէշէ (Վասպուրական) գաղթած հա-
յերու կողմանէ շինուած՝ (թէպէտ Լատինաց ձեռքն կը դնուէ յայտօր),
հայ ճարտարապետութեան օրինակ մ'է. Կան եւ ըսողներ թէ ուս

ձարտարապետութիւնն եւ գործիկ ոճն հայկականէն ծնունդ առած են։
Հայ կիներն նշանաւոր են Իրենց առեղծոքորութեամբ ու այդ ձեռար-
ուեստն իրենց հեռաւորած ին ամենուրեք։

Իրաւական հայերն երկրագործ եղած են այն ամեն միջավայրե-
րու մէջ ուր պարագայք ներած են ու հանգարտութիւն գտած են, որ-
պէս Մոլմալիոյ, Վալաքիոյ եւ Խրանսիլիմսիւս մէջ ուր զեռ կան մե-
ծահարուստ հայ հողատէրներ։ Հայերն տուած են եւ քաջամարտիկ զին-
ուորներ, որ Հոռովի յանաջգնաց զոնդերուն Կրպէս եւ Բիւզանդիոնի բա-
նակներուն մէջ համարաւոր եղած են։ Նարսիս կամ Ներսէս Գոթացւոց
յաղթող եւ Իսթիքանն նոսաճող, Հոռովի նշանաւոր հիւպատոսն եւ քա-
ջարի զօրավարն Հայ մէկը Բիւզանդիոնի գահուն վրայ ունեցած եմք
14 հայ փայտեր (Մարիկ կամ Մաւրիտոս Օլականցին, Մոսեօ Գնունին,
Արաւաւազ, Կիրակապատն, Վարդան Պատրիկն, Արչաիլ Պատրիկն,
Լեւոն Ն. Արծրունիք, Վասիլ Ա. Սրէնսզիւրն, Լեւոն Զ. Իմաստաւորն,
Կոստանդին Պերիկրոմէն, Իոմանոս Ա. Վաչտակեանն, Իոմանոս Բ.,
Յովհաննէս Չօլկիկն կամ Չօլկաճազցին, Վասիլ Բ. Թոռն Վասիլ Ա. -ի,
Կոստանդին Թ.) եւ 20-էն աւելի անուանի զօրավարներ։

Եղբայրսի Մալմաշաց՝ ծառայութեան մէջ ունեցած եմք շատ մը
պատերազմիկներ եւ անուանի զօրավարներ, յորոց եօթն յարձրացան
յաստիճան՝ Պիզիլիութեան քաղաքը զոր մը (1072 - 1170) հառաւարած են
Եղիպատոսն, յորս էր Թաճ Էլ Տէօզլէ Պէնթալ (Վահրամ Պաշլաուսի)՝ ի
մօրէ Դրիդոյ Մալիսարոսի-Թոռն Երչատակեմք եւ Ժ. զարուժ յիշուած
Վարդան մը, որոյ անուանի կը կրէ հին Գոթիլի կամ Ֆոտտաաթի մի
յուզան (Սուր Վարդան) ԺԱ. զարուս հայկական յատուկ զօրագունդ մը
կը յիշուի Հիւսէյիկի-Թազին մէջ 1177-ին կը յիշատակուի եւ Վար-
դան անուն մի հայ իշխան Գուցլ եւ Խաչակրաց ձեռքէն Ներսիսաղլիմ
խլող իմանակաց Երամանատարերն Հայեր էին։

Հայք տուած են Աղուանից, Վրաց, Պոնտկարաց եւ Մոլմալաց քա-
ջարի զօրավարներ եւ քաղաքագէտներ, յորոց եւ՝ ծմանք արքայական
գահն ըստ ըստած են։ Բլաչէ եւ Կորիկէ արքայք Աղուանից եւ Սամուէլ
Դերջանցի Պոնտկարաց Թագո՞ւորն եւ Յովհաննէս Հայկաղն Մոլմալիոյ
իշխանն հայաղգիներն էին։

Հայք կորսնցորցած չ'եմք զինուորական ետանդն եւ զեռ նոր
վերջացող զարուս մէջ տուած եմք Ռուսիոյ կոյսրութեան մէջ նշանա-
ւոր զօրավարներ, յորս յիշատակեմք Բաղրասիսն իշխանն Բաղրասու-
նի, Արամելիքեանց Դաւիթ իշխանն, Մատաթօ իշխանն, Ժիւանեանց
Դաւիթ, Յարութիւնեանն, Բարսեղ Բենյուտեանն, Շելզօփիկօֆ եւ
Բենյուտօֆ, Լապարէֆ, Տէր Ղուկասօֆ, Լորիս Միլիքօֆ, Արղութեան

Սրկայնաբազուկն, Օրրէյեանն, եւն։

Թուսերն իրենց արհեստան բոլոր, պատերազմաց յաղթութիւն-
ներն հայ զօրավարաց կը պայտին, միայն Ճարոնական վերջին
պատերազմին մէջ անոնց մեծ դերը չ'արուեստաւ, եւ արդիւնքն ամենուն
ծանօթ է։

Հայք նշանաւոր քաղաքագէտներ տուած են իրենց պահած կա-
ռավարութեանց, Թուրքիայէն յիշատակեմք Նազուկ ամիրան, Գազազ
ամիրան, Ճէզայրիի ամիրան, Աղաթոն Գրիգոր, Օսեան Գրիգոր,
Տաւուս փաշայ, Յակոբ փաշայ Գազազ, Տասեան Յարութիւն փաշայ,
Փորթուզալ փաշայ եւն։ Թուպատանէն՝ Մանուկ պէյ Միրզայեան,
Յովհաննէս կոմս Լալայեան, Քրիստափոր Լազարեան, Լորիս Մելիքով եւն։

Պարսկաստանէն նոյն իսկ ժէ, դարուն Սաֆար Զոզայեցին՝ Շա-
հաբասայ խորհրդական, Կնեսազ Դաւիթ Մելիքեանցն, Մանաւուր խան
Էնսէֆէլուփեանցն, իսորով խան Ղայիթ Մազեանցն եւն, իսկ այս վեր-
ջին տարիներն Մելքոն խան, Ներիման խան, եւն։ Հնդկի եւ Պրիման
իշխանաց խորհրդականք եւ մեծ նախարարք Հայեր էին ժինչ Անպղիւս-
ւոց 'ի Պրիմանիա մուռքն եւ Նուսեմիլի։

Նգրպտոսէն յիշատակեմք Պաշոս պէյ Սուսուֆ, Արթին պէյ Զրադ-
եան, Նուպար փաշայ։

Թուամանիոյ, Աստրիոյ-Հոնդարիոյ մէջ ունեցած եմք եւս տեսիմք
իսկ այժմ նշանաւոր հայազգի քաղաքագէտներ

Հայք իրենց այս անհատական յաջողութիւններով չ'ընացան, եւ
միշտ փորձեցին հաւաքական եւ ազգային յաջողութիւններ ալ ձեռք
ձգել, աւր որ իրենց դիրքն ու վիճակն կը ներէր, արդարեւ ուր որ
հոծ համախմբում մ'ունեցան՝ փորձեցին կազմել, ինքնավար հասարա-
կութիւններ, ինչպէս 'ի իւրիմ որ ծովահանացն Հայաստան անուանե-
ցաւ, 'ի Թրանսիլվանիա՝ ուր հիմնեցին Կեռլա (Հայաքսաք) եւ Նդի-
սաքեթպօլ ազատ քաղաքներն, ունեցան առանձնաշնորհումներ 'ի Լեհա
(Իւլով) եւ 'ի Բուգովինա (Սուչաւա) եւ նոյն իսկ ազգային դատարաններ
եւ ինքնավար իշխանութիւն (Կիսլա, Նդիսաքեթպօլ) իսկ 'ի Կլիկիա տեղ-
ւոյն պատշաճ դրից շնորհել՝ հիմնեցին փայլուն իշխանութիւն մը որ երեք
դարեր զիմացաւ Ատոնց յաջորդներն են Զէյթունի քաջարի լեռնականներն
որք վերջին ցեղքերուն առթիւ աշխարհառջիւ վերրոնեցին հայու պատին։

Հայք ամենուրեք տարին իրենց կրօնն, հաստատելին եկեղեցի-
ներ, վանքեր, իրենք հիմնած են Մատրասի առաջին քրիստոնեայ
եկեղեցին, իրենց կրօնի աղագաւ, կրեցին մեծ հաւածանքներ մանա-
ւանդ 'ի Պարսկաստան, Միջագետք, Նգրպտոս, Մուլապիա, Վաչաքիա,
Լեհաստան, Իտալիա, Բիւզանդական կայսրութեան մէջ, տոկացին ա-

մինութեք ընդ երկար. եւ պատմութիւնն մեզ կը ցուցնէ թէ՛ ուր որ սկսան կրօնի սեռակէտով համակերպում ցոյց տալ՝ եւ ընդհանրապէս նախ առ երեւոյթս. պահելով իրենց ազգութիւնն, լեզուն, եւն. ու եղան Հայ-Հոռոմ. Հայ-Կաթոլիկ, Հայ-Իսլամ կամ Կէսկէս, Հայ-Ռողոքական, եւ այլն, ապա եւ վրայ առելն իրենց ազգութիւնն. այսպէսով տնհետացան Ռի. զանդիտի Նին հայ գաղութն. Ազգիպատի. Միջպգիտաց եւ այլ իսլամ երկրաց հայ գաղութներն. Լեւաստանի, Թրանսխիվանիոյ, Իսախիոյ, Հոյանտայի, Հնդկաստանի եւ այլ հայ գաղութներն. ուստի կրօնն մանաւանդ օտարութեան մէջ մեր ազգային պահպանութեան կարեւոր պայմաններէն է:

Գաղթող Հայք տարին իրենց ազգային պատմութեան գործերն, մատենագրերն ու Ս. Գիրքն. մատենագրարաններ հաստատեցին եւ ընդօրինակութեամբ ծաւալեցին զայնս ու իրենց սերնդի ժառանգ թողուցին զանոնք որպէսզի ուսնին իրենց տոմի պատմութիւնն, իրենց ազգային մատենագրերն եւ Ս. Գիրքն. ու երբ տպագրութեան գիւտն եղաւ. անոնք եղան առաջին հայ տպարաններ հաստատողներն (Վենետիկ, Հռոմ, Միլան, Լեմպերտամ, Իլլով, Հնդկաստան), անոնք տպեցին առաջին անգամ մեր ազգային պատմիչներն, մատենագրական գործերն ու Ս. Գիրքն. Կիլիկիցի տառիչն հայ խելին (Մատրասի Լեզարարն) եւ այսպէսով վառ պահեցին միայն իրենց գաղութներու մէջ Ազգ. պատմութեան ու մատենագրութեան ոգին: Եւ կր տեսնամք որ այն ամեն տեղեր ուր այդ շարժումն վերջ կը գտնայ, կը սկսին պազիլ հայութենէ եւ հետզհետէ օտարանալ:

Հայք տարին իրենց լեզուն, ու քանադիր եղան ամեն ուրեք իրենց եկեղեցւոյ հովանւոյն տակ հաստատել վարժարաններ, անդ իրենց զաւակաց ուսուցանել իրենց մայրենի լեզուն. մշակեցին գրականութիւնն, ու դեռ անոնց Հնդկաստանի միացորդներն մատենագրական լեզունով կը գրեն դարդ, ինչ որ մենք վաղուց կ'օրանցուցած եմք: Իրենց ընտանեկան յարկերու մէջ հայերէնն միայն կը խօսէին. սակայն այն գաղութներու մէջ ուր Հայք սկսան միջավայրի լեզուն խօսիլ ու զայն գործածել իրենց տանց մէջ ու զաւակներն ին կրթուեցան ստարաց վարժարաններն, օտարացան եւ հուսկ ուրիմն մոռցուեցաւ հայերէնն, եւ ազգային պահպանութեան այս կարեւոր ազդակն բարձուեւ եւ այսպէս կը տեսնամք Հայեր որպէս 'ի Լեւո, 'ի Թրանսխիվանիա եւ 'ի Ռուս մանիս որք զիտեն ու կը խոստովանին թէ՛ Հայ են, սակայն հայերէն քառ մը չ'են զիտեր: Ասոնց զաւակներն ու թոռներն անշուշտ եւ պիտի մոռնան իրենց տոմի ծնունդն:

Հայք տարին իրենց հետ իրենց ազգային տարազն ու սովորոյթներն, ու այդ տարազով կը տեսնամք իրենց զոգթ ու մէն երկար տարի-

ներ վերջ յ'իտալիա 'ի Հոլանտա, 'ի Ռումանիոյ, 'ի թրանսիլանիոյ
'ի Լեհա, Անգլիոցիք երբ, Հնդկաստան մասն՝ հայ կրիւկիներ իրենց
ազգային տարազով ներկայացան, Հայք իրենց ազգային սովորութիւն
ներն երկար ատեն պահած են հակառակ առ այդ իրենց դրած հալածա
նաց, սակայն ամենուրեք ուր սկսած են թողուլ իրենց ազգային սա
րազն, սովորութիւններն, ազգային ածներն ու հանգիստներն սկսած են
խառնուիլ օտարաց հետ եւ կորոնցուցած են ազգային պահպանութեան
այս ազդակի ազդեցութիւնն:

Արդ պատմութիւնն եւ փորձառութիւնն մեզ կ'առաջանեն թէ՛
հայ գաղութներու ճիշդին չ'զօրեցին ուր նոյնքէն էին, ուր որ բնա
թիւն կար, եւ ուր որ ազգային ետանդն ու խանդն սկսան նուազիլ
անոնց փորձառութիւնն ազատելու եմք եւ պահպանութեան միջոց
ներն ուսումնասիրելու, քանի որ Մայր-Հայրենիաց ցփրազգ վիճակն
նորանոր գաղութներու ծնունդ կուտայ Տեսանք թէ՛ յատարութեան
պահպանման պայմաններն ու ազդակներն են հոգութիւնն, ցիտակցու
թիւն մեր պատմութեան, պահպանութիւն մեր լիզուէ, կրօնի եւ ազ
գային սովորութիւննց: Աստի օտարութեան մէջ հոգաւորութիւնն ու իրա
րու վրայ դարգութեամբ պահեմք մեր լիզուէ, խնամեմք եւ օտուցանելու
զայն մեր գաւակաց, ուսանելու մեր ազգ, պատմութիւնն ու անոնց կ
զայն մեր սերնդեան, պահեմք մեր կրօնն եւ ազգային եկեղեցւոյ
վարդապետութեանց հաշտարիլ մնալու պահեմք մեր ազգային ս
վորութիւններն, ածներն ու ստանձնաշատկութիւններն, օտար ամուս
նութիւններէ խոյս սամք, օտար միջոց օտար Արար, կրնն որչա
լաւ յատկութիւններով օժտուած ըլլայ՝ մեզ կէս արիւն զաւակներ
կուտայ, որք աւելի իրենց մօր ցեղին հակառկ քրջան, իսկ անոնցմէ
սերածներն միշտ օտար կըլլան: Օտար ամուսնութիւն կնքողն կոքսուած
մէ՛ Հայութեան համար:

Օգնեմք նիւթապէս մեր հայրենի երկրին վրայ շարքող եղբարց
ջանամք որ անոնք ալ մեզ նման չ'քանեն հայրենի հողն, ծանօթա
ցնեմք Հայն օտարաց եւ վաստակեմք անոնց համակրութիւնն ու սերն
Դիւանապետութեն աշխատեմք, խորշիմք բռնի կամ գրով մեր թշնամի
ներն գրգռելէ, ինչ որ կրնայ մեր հայրենաքնակ եղբարց վրաս տալ:

Միշտ յիշեմք մեր զաւակաց թէ մենք եկեորներն եմք աշխուղ թէ
Մայր-Հայաստան որոյ, հողը մեր նախահարց անխնկերով կազմուած է
եւ զեաերն անոնց արիւնով ներկուած են՝ ցրկաբաց կը քրպառ մեր
վերադարձին, որ զինք սփոփեմք, ոգեւորեմք, ու վերականգնեմք:

Տոթ. Ն. ՏԱԶԱՒԱՇԵԱՆ